



ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016թ.

Գործունեության II տարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2015-2017թ.թ.-ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ	4
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ	5
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ	7
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐԾԻՔՆԵՐ	14
ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՋԵԿՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ	16
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ (SOFT LAW) ՁԵՎԱՎՈՐՈՒՄ	22
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ	30
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	31
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	32



**ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ**

Ուրախ եմ ողջունել ձեզ որպես ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության նորաստեղծ գործակալության առաջին ղեկավար: 2015 թվականի հոկտեմբերին ստեղծված գործակալությունն արդեն անցած ճանապարհ, արձանագրած մեծաթիվ հաջողություններ ու ճանաչելիություն ունի:

Մեր փոքր, բայց ակտիվ թիմը անցնող մեկ տարվա ընթացքում իսկապես հսկայական աշխատանք է կատարել՝ հնչեղություն ստացած վարչական վարույթներից մինչև բազմաթիվ խորհրդատվություններ, թեմատիկ ուսումնասիրություններ և մշակված ուղեցույցներ, հանրային իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, աշխատանքային քննարկումներ ոլորտի տարբեր հիմնահարցերի շուրջ: Եվ այս ամենը՝ անձնական տվյալների պաշտպանության դեռևս նոր ձևավորվող իրավունքի պայմաններում: 2016թ.-ի ընթացքում ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը քաղաքացիների դիմումների հիման վրա կամ գործակալության նախաձեռնությամբ հարուցել է 11 վարչական վարույթ, որոնց արդյունքում կայացված որոշումների մի մասը նախադեպային է: Դրանք կարող են հիմք լինել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում վիճելի կամ երկակի չափանիշների կիրառման կանխարգելման համար:

Կարևորում ենք հատկապես անձնական տվյալներ մշակողների մոտ պատասխանատվության բարձրացումը և այն գիտակցության ձևավորումը, որ անձնական տվյալների օրինական մշակումը և պատշաճ պահպանումը բխում են հենց մշակողների շահերից, քանի որ հնարավորություն են տալիս խուսափել հեղինակության և ֆինանսական միջոցների կորստից, ինչպես նաև վարչական պատասխանատվությունից: Միջազգային պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ մասնավոր սեկտորում հաճախորդների կամ անձնակազմի անձնական տվյալների արտահոսքերն ընկերություններին պատճառել են հսկայական ֆինանսական վնասներ:

ԵՎ վերջապես, կարևորում եմ հատկապես լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ ակտիվ աշխատանքը: Մենք վստահ ենք, որ միայն լրագրողների և քաղհասարակության հետ ակտիվ համագործակցության շնորհիվ է հնարավոր կայացնել անձնական տվյալների պաշտպանության ոլորտը, լուծել հանրության իրազեկման խնդիրը և հաղթահարել որոտում առկա բազմաթիվ հիմնախնդիրները:

Անձնական տվյալների պաշտպանության միջազգային օրը՝ հունվարի 28-ին մեծագույն հպարտությամբ ցանկանում եմ ձեր դատին հանձնել գործակալության երկրորդ հանրային հաշվետվությունը: Այն ներառում է գործակալության՝ 2016 թվականի իրականացրած աշխատանքը:

*Շուշան Դոյրոյան, ԲԳԹ*

*ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ*

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Գործակալությունը, առաջնային համարելով թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների ապահովման կարևորությունը, ներկայացնում է 2016թ.-ի ընթացքում կատարած աշխատանքի հրապարակային 2-րդ հաշվետվությունը: Այս պարտավորությունը բխում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածից, որի համաձայն՝ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը «տարեկան մեկ անգամ ներկայացնում է հրապարակային հաշվետվություն՝ անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակի և նախորդ տարվա գործունեության վերաբերյալ»:

Այս հաշվետվությամբ ներկայացված են նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտի հիմնախնդիրների և մարտահրավերների լուծմանն ուղղված աշխատանքները: Գործակալությունն իր գործունեության սկզբում նախանշել էր ոլորտի հիմնական խնդիրները. անչափահասների անձնական տվյալների պաշտպանությունը, տեսահսկման իրականացումը (ամենատարբեր դրսևորումներով՝ տեսահսկում հանրային վայրերում, տեսահսկում դպրոցներում), ինչպես նաև անցանկալի հաղորդագրությունների խնդիրը: Անձնական տվյալների պաշտպանության ոլորտի մարտահրավերներից էին նաև այս իրավունքի կայացումը և հասարակության իրազեկվածության բարձրացումը: 2016թ.-ին Գործակալության կատարած աշխատանքներն ուղղված են եղել հիմնականում վերոնշյալ խնդիրների լուծմանը:

Գործակալությունը 2016թ.-ին առաջնորդվել է իր ընդունած 2015-2017թթ. երկամյա գործողությունների ծրագրով: Այդ փաստաթուղթը ներկայացնում է Գործակալության տեսլականն անձնական տվյալների պաշտպանության ոլորտում առաջնահերթությունների, գործունեության հիմնական ուղղությունների, ինչպես նաև Գործակալության կարողությունների զարգացման վերաբերյալ: Հիմնվելով երկամյա գործողությունների ծրագրի վրա՝ Գործակալությունը նախանշել էր 2016թ.-ի հետևյալ առաջնահերթությունները.

- **Հրապարակայնության և հաշվետվողականության բարձր մակարդակի ապահովում**
- **Հանրային լայն իրազեկում**
- **Փափուկ իրավունքի ձևավորում մի շարք առանցքային ոլորտներում**
- **Ինտեգրում անձնական տվյալների պաշտպանության միջազգային ընտանիքին (միջազգային ակտիվ համագործակցություն):**


Գործակալությունը նախանշել էր նաև այն հիմնախնդիրները, որոնք առավել հաճախ են առաջ գալիս անձնական տվյալների պաշտպանության ոլորտում, և սահմանել էր իր առաջնահերթությունները նաև ըստ ոլորտների.

- **Անչափահասների անձնական տվյալների պաշտպանություն**
- **Տեսահսկում**
- **Անցանկալի հաղորդագրություններ**

**ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը նոր է. Ընդ որում, Օրենքով սահմանված են անձնական տվյալների պաշտպանության նոր կառուցակարգեր, անձնական տվյալների հետ վարվելու նոր կանոններ: Հետևաբար, բազմաթիվ քաղաքացիներ, անձնական տվյալներ մշակող կազմակերպություններ և պետական մարմիններ դեռ բավարար չափով տեղյակ չեն, թե Օրենքի կարգավորումներն ինչ իրավունքներ ու պարտականություններ են սահմանում իրենց համար, ուստի, 2016թ.-ի ընթացքում շատ քաղաքացիներ, կազմակերպություններ դիմել են Գործակալությանը՝ Օրենքի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար: 2016թ.-ին Գործակալությունը **343** անձի և կազմակերպության տրամադրել է խորհրդատվություն, որից 40 քաղաքացի, 187 իրավաբանական անձ, 82 պետական մարմին (այդ թվում՝ ՏԻՄ-եր և պետական հիմնարկներ), 22 լրագրող, 5 ՀԿ և 7 փաստաբան:

Աղյուսակ 1. Դիմողներ




**343**

Անձ և կազմակերպություն

Քաղաքացի	40
Իրավաբանական անձ	187
Պետական մարմին	82
Լրագրող	22
ՀԿ	5
Փաստաբան	7


Գործակալությունը 343 խորհրդատվությունից 287-ը տվել է բանավոր, 56-ը՝ գրավոր:

Աղյուսակ 2. Խորհրդատվության ձևը



Դիմողների մեծ մասը՝ 66%-ը, խնդրել է խորհրդատվություն կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակման ընթացակարգերի և այդ մասին ծանուցման վերաբերյալ: Դիմողների 8%-ը խնդրել է խորհրդատվություն անձնական տվյալների անվտանգության ապահովման վերաբերյալ, իսկ 7%-ը՝ անձնական տվյալներն այլ երկիր փոխանցելու վերաբերյալ: Դիմողների մնացած 19%-ը Գործակալությունից խորհրդատվություն է խնդրել տարբեր՝ երեխաների անձնական տվյալների պաշտպանության, անցանկալի հաղորդագրությունների (ուղղակի մարքեթինգ), տեսահսկման և այլ հարցերի վերաբերյալ:

Աղյուսակ 3. Խորհրդատվության ոլորտները



- Ծանուցումներ կենսաչափական տվյալներ մշակելու վերաբերյալ 66%
- Անձնական տվյալներ մշակելու սկզբունքներ և մեխանիզմներ 8%
- Տեսահսկման հիմնական կանոններ 6%
- Սվյալների փոխանցում այլ երկիր 4%
- Անցանկալի հաղորդագրություններ 5%
- Անչափահասների անձնական տվյալների մշակում 5%
- Այլ 6%

### Հաջողված գործ

2016թ.-ի փետրվարին «Save the Children» միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը դիմել էր Գործակալությանը՝ խնդրելով միջամտել ինքնասպանության փորձ կատարած երեխաների ինքնության գատնիությունը պաշտպանելու համար: [www.shamshyan.com](http://www.shamshyan.com) կայքում հրապարակվել էր նյութ գիշերօթիկ հաստատության սաների կողմից ինքնասպանության փորձի վերաբերյալ՝ նշելով նրանց անուն, ազգանունները, տարիքը, հաստատության անվանումը, ինչպես նաև լուսանկարներ, որոնցում երևում էին երեխաները: Գործակալության միջամտությամբ [shamshyan.com](http://shamshyan.com)-ը հրապարակման մեջ ապանձնավորեց երեխաներին՝ հանելով անուն, ազգանունները, ինչպես նաև այն լուսանկարները, որոնցում երևում էին երեխաների դեմքերը: Այս դեպքը նաև առիթ դարձավ, որ Գործակալությունը հրապարակի երեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ իր խորհրդատվական որոշումը (ավելի մանաբանական տես՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ (SOFT LAW) ՁԵՎԱՎՈՐՈՒՄ քաժնում):

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Գործակալությունն իրավասություն ունի իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա ստուգել անձնական տվյալների մշակման համապատասխանությունն օրենքի պահանջներին: Ըստ Օրենքի՝ Գործակալությունը նաև քննում է ֆիզիկական անձանց դիմումները և ընդունում համապատասխան որոշումներ, ինչպես նաև կարող է օրենքի պահանջների խախտման դեպքում կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ: Իր այդ լիազորությունները Գործակալությունն իրականացնում է վարչական վարույթի շրջանակներում:

Այն բոլոր դեպքերում, երբ քաղաքացիները համարում են, որ անձնական տվյալների պաշտպանության իրենց իրավունքը ոտնահարվել է, իրենց անձնական տվյալներն օգտագործվել կամ այլ կերպ մշակվել են օրենքի խախտմամբ, առանց իրենց համաձայնության կամ իրավական հիմքի, կարող են դիմել Գործակալությանը՝ վարչական վարույթի շրջանակներում իրենց հարցի քննության համար:

Լինում են նաև դեպքեր, երբ հասարակական կազմակերպությունները կամ քաղաքացիները տեղեկացնում են Գործակալությանը այս կամ այն կազմակերպության, մարմնի կողմից մարդկանց անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման մասին (ոչ թե կոնկրետ անձանց, այլ անորոշ թվով անձանց, բոլորին վերաբերող) կամ իր վերլուծությունների, ուսումնասիրությունների ընթացքում Գործակալությունն ինքն է հանդիպում անձնական տվյալների խախտում ենթադրող դեպքերի: Նման դեպքերում, երբ խոսքը չի վերաբերում կոնկրետ անձանց իրավունքի խախտմանը, Գործակալությունը վարչական վարույթ է իրականացնում սեփական նախաձեռնությամբ:

2016թ.-ի ընթացքում Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունում քաղաքացիների դիմումների հիման վրա կամ Գործակալության նախաձեռնությամբ հարուցվել է 11 վարչական վարույթ, որոնցից 9-ով կայացվել է որոշում, իսկ 2-ը դեռ քննության ընթացքում են: Ստորև վարչական վարույթներով կոնկրետ գործերի ամփոփ նկարագրությունն է՝ ներկայացված ըստ վարույթի հարուցման ժամանակագրության:

### **Վարույթ #1. Իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գրանցամատյանում ՓԲԸ-ի մասնակիցների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ**

Գործակալությունն իր առաջին վարույթը հարուցել է 2015թ.-ի դեկտեմբերի 28-ին՝ «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց

պետական ռեզիստրի գործակալության դեմ: «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲԸ-ն Անձնական տվյալների պաշտպանության Գործակալությունից խնդրել էր պահանջել իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանից ոչնչացնել «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲԸ-ի մասնակիցների (բաժնետերերի) կազմի, նրանց մասնակից դառնալու, մասնակցության չափերի և դրանց փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն այս գործով որոշել էր բավարարել դիմումատուի պահանջը՝ Իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությունից պահանջելով իրավաբանական անձանց պետական գրանցամատյանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ոչնչացնել «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲԸ-ի մասնակիցների (բաժնետերերի) կազմի, նրանց մասնակից դառնալու, մասնակցության չափերի և դրանց փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը:

## Վարույթ #2. Բժշկական տվյալների մշակման վերաբերյալ

2016թ.-ի մարտի 1-ին Գործակալությունը վարույթ էր հարուցել՝ պարզելու, թե արդյոք թմրադեղ ստացող հիվանդների բժշկական անձնական տվյալները և նրանց օգնող անձանց մասին տեղեկությունները բժշկական հաստատությունների կողմից ՀՀ ոստիկանությանը փոխանցելը համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Վարույթը հիմնված էր Human Rights Watch միջազգային ՀԿ-ի կողմից Գործակալությանն ուղղված գրության վրա:

Գործակալությունը հաշվի էր առել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները, և վարույթի հիմքում ընկած տեղեկությունների բնույթը՝ որպես «բժշկական գաղտնիք»: Գործակալությունն իր որոշմամբ հաստատել էր, որ բժշկական բնույթի տեղեկությունները գաղտնի պահելը մարդու իրավունքն է, իսկ գաղտնիության ապահովումը՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունը:

Գործակալությունը որոշեց, որ թեև թմրադեղ ստացող հիվանդների անձնական տվյալները, ինչպես նաև եթե հիվանդն ընդունակ չէ ինքնուրույն ընդունել թմրադեղը, այն անձի անձնական տվյալները, ով վերցնում է թմրադեղը և օգնում հիվանդին ընդունել այն, ՀՀ ոստիկանության կողմից ստանալու հնարավորությունը նախատեսված է օրենքով, ***սակայն որևէ իրավական ակտով սահմանված չեն նշված անձնական տվյալների փոխանցման կարգը և պայմանները, և այս պարագայում ապահովված չէ անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքը:***



Ի կատարումն Գործակալության որոշման՝ ՀՀ առողջապահության նախարարությունը շրջաբերականներով դիմել էր իր ենթակայության տակ գտնվող բժշկական հաստատություններին՝ պահանջելով ապահովել բժշկական անձնական տվյալների գաղտնիությունը, դրանք այլ անձանց փոխանցել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Նախարարությունը շրջաբերականով դիմել էր նաև Երևանի քաղաքապետարանին և ՀՀ մարզպետարաններին՝ նրանց ենթակայությամբ գործող բժշկական հաստատություններին՝ համապատասխան պահանջով դիմելու համար:

**Վարույթ #3. Երևանի քաղաքապետարանի («Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի) կողմից Երևան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերի տեսահսկման վերաբերյալ**

2016թ.-ի մարտի 1-ին Գործակալությունը վարույթ է հարուցել՝ պարզելու, թե արդյոք Երևանի քաղաքապետարանի («Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի) կողմից Երևան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերում (կարմիր գծեր) տեղադրված տեսախցիկներով արվող տեսագրությունը համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Վարույթի շրջանակներում Գործակալությունը արձանագրեց, որ տեսագրության միջոցով անձնական տվյալները պետք է հավաքվեն և օգտագործվեն բացառապես ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողության իրականացման նպատակով և այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար, իսկ այն անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ չեն այդ նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ, չպետք է մշակվեն:

Գործակալությունը որոշեց, որ տեսագրման իրականացումը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից վարչական իրավախախտումը ապացուցելու համար տեսագրությունը վարչական ակտի հասցեատիրոջը հասանելի դարձնելը, բողոքարկման դեպքում նրան ուղարկելը՝ առանց դրանում առկա այլ անձանց անձնական տվյալների ապանձնավորման, **հակասում է անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքին:**

Ի կատարումն Գործակալության որոշման՝ «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն ներկայացրել էր վարչական ակտի հասցեատիրոջն ուղարկվող տեսագրության նոր ֆորմատը, որի համաձայն՝ այդուհետ տեսագրության որակն իջեցնելու միջոցով ապանձնավորվելու են վարչական ակտի հասցեատերերին ուղարկվող տեսագրությունների մեջ առկա այլ անձինք և մեքենաների համարանիշները:

**Վարույթներ #4 և #5. ՔԿԱԳ-ի կողմից անձի մահվան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքը փաստաբանին տրամադրելու վերաբերյալ և Գործակալության որոշման դեմ քաղաքացու բողոքի վերաբերյալ**

2016թ.-ի մայիսի 25-ին Գործակալությունը քաղաքացու դիմումի հիման վրա վարույթ էր հարուցել՝ ստուգելու, թե արդյոք ՔԿԱԳ ԵՀՍ տարածքային բաժնի կողմից անձի մահվան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքը տրամադրելու միջոցով նաև անձի առողջական վիճակի մասին տեղեկությունները այլ անձի (տվյալ դեպքում՝ փաստաբանի) տրամադրելը և փաստաբանի կողմից այդ տեղեկություններն օգտագործելը համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Ուսումնասիրելով ոլորտը կարգավորող օրենսդրությունը՝ Գործակալությունը որոշեց, որ քաղաքացու մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունների մասին տեղեկություններ (առողջական տվյալներ) պարունակող տեղեկանքը փաստաբան Վանիկ Մարգարյանին ՔԿԱԳ ԵՀՍ տարածքային բաժնի կողմից տրամադրելը *չի հակասում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին, քանի որ նախատեսված է օրենքով:*

2016թ.-ի օգոստոսի 30-ին քաղաքացին բողոք էր ներկայացրել Գործակալությանը՝ խնդրելով վերանայել իր որոշումը: Քաղաքացու բողոքի հիման վրա Գործակալությունը ևս մեկ անգամ ստուգել է ՔԿԱԳ-ի գործողությունների համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և որոշել, որ նախորդիվ կայացրած իր որոշումը պետք է թողնել անփոփոխ:

**Վարույթ #6. nutcall.com կայքի միջոցով ՌԴ քաղաքացիների անձնական տվյալների մշակման վերաբերյալ**

2016թ.-ի հունիսի 10-ին Գործակալությունը վարույթ է հարուցել՝ ստուգելու թե արդյոք nutcall.com կայքի միջոցով ՌԴ քաղաքացիների անձնական տվյալների հրապարակումը համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Վարույթը հարուցվել է Գործակալության նախաձեռնությամբ՝ ՌԴ Կապի և զանգվածային հաղորդակցությունների նախարարության հաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և զանգվածային հաղորդակցությունների վերահսկողության դաշնային ծառայության գրության հիման վրա: Ծառայությունն իր գրությամբ հայտնել էր, որ nutcall.com դոմեյնի ադմինիստրատորը Stark Industries (Սթարք Ինդասթրիզ) հայկական կազմակերպությունն է:

Վարույթի ընթացքում պարզվել էր, որ Սթարք Ինդասթրիզ կազմակերպությունը nutcall.com կայքին միայն տեխնիկական օժանդակություն է ցուցաբերում և որևէ կերպ չի առնչվում nutcall.com-ի գործունեությանը, կայքի սեփականատերը կամ գործարկողը չէ, այսինքն՝ «Սթարք Ինդասթրիզ» ՍՊԸ-ն սույն վարույթի արդյունքում կայացվելիք վարչական ակտի հասցեատեր չէ:

Արդյունքում, վարչական վարույթը կարճվել է: Սակայն, վարույթի ընթացքում Գործակալության միջամտությամբ nutcall.com կայքը խմբագրել է կայքի բովանդակությունը և ապահովել, որ այնտեղ առկա այն անձանց անձնական տվյալները, ում համաձայնությունն առկա չէ, կայքից հեռացվեն: Բացի այդ, nutcall.am կայքում առանձին բաժնով տրվել է հետադարձ կապի հնարավորություն, որի միջոցով առաջարկել է հայտնել առանց համաձայնության անձնական տվյալների մշակման մասին և պարտավորվել միջոցներ ձեռնարկել:

**Վարույթներ #7 և #8. Դպրոցներում տեսահսկման իրականացման վերաբերյալ**

2016թ. նոյեմբերին Գործակալությունը 2 վարչական վարույթ էր հարուցել Երևանի 20 դպրոցներում տեսահսկման իրականացման համապատասխանությունն «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքին պարզելու նպատակով:

Մի շարք դեպքերում գործակալությունը հայտնաբերել է անձնական տվյալների մշակման համաչափության, օրինականության սկզբունքների, ինչպես նաև անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովման խախտումներ: Որոշ դպրոցներում երեխաների տեսահսկումն իրականացվել է առանց նպատակը նախապես սահմանելու, այսինքն՝ թե կոնկրետ որ օրինական նպատակին հասնելու համար է իրականացվում երեխաների տեսահսկումը: Օրինական նպատակ այս դեպքում կարող է լինել անձանց և գույքը, ինչպես նաև անչափահասներին վնասակար ազդեցություններից պաշտպանելը:

Խախտումների հաջորդ խումբը շեղումն է համաչափության սկզբունքից, երբ նպատակը չի համապատասխանում մշակվող տվյալների ծավալին: Այսինքն՝ մշակվում են անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար, կամ անձնական տվյալները մշակվում են ավելի մեծ քանակով, քան անհրաժեշտ է սահմանված նպատակներին հասնելու համար: Ինչպես նաև որոշ դպրոցներում տեսահսկվող տարածքների տեսանելի հատվածներում չկան նախազգուշացնող նշաններ՝ տեսախցիկների նկարահանման դաշտ մտնող բոլոր անձանց տեղեկացնելու տեսահսկման մասին:

Գործակալությունը հաշվի է առել, որ ուսումնական հաստատություններում տեսախցիկների առկայությունը պետք է բխի երեխայի լավագույն շահից: Դպրոցներում տեսահսկման համակարգերը պետք է տեղադրվեն միայն այն բացառիկ դեպքերում, երբ այլ միջոցներով հնարավոր չէ հասնել հետապնդվող նպատակին: Տեսախցիկների տեղադրման վայրերի ընտրությունը միշտ պետք է լինի հետապնդվող նպատակին համապատասխան և համարժեք:

*Գործակալությունը հատուկ ընդգծել է այն գաղափարը, որ տեսահսկումը հակակշռվում է աշակերտների, ուսուցիչների և այլ աշխատողների անձնական կյանքը հարգելու իրավունքով և կարող է միջամտել և խոչընդոտել մի կողմից աշակերտների կրթություն ստանալու և խոսքի ազատությանը, իսկ մյուս կողմից՝ ուսուցիչների համար դասավանդման ազատությանը: Պետք է հաշվի առնել նաև երեխայի՝ իր անհատականությունը զարգացնելու իրավունքը: Անշուշտ, երեխայի՝ իր անհատականությունը աստիճանաբար զարգացնելու իրավունքը խեղաթյուրվում է, եթե վաղ հասակից սկսած երեխան բնականոն երևույթ համարի իրեն տեսահսկելը: Ինչպես նաև, անվտանգության նպատակով իրականացվող տեսահսկումը չի կարող կիրառվել աշակերտների կարգապահության, ուսուցիչների աշխատանքի կամ ուսումնական գործընթացի որակի վերահսկողության կամ այլ նպատակով:*

Վարչական վարույթով կայացրած իր որոշմամբ Գործակալությունը պարտավորեցրել է Երևանի 20 դպրոցներին իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ երեխաների և ուսուցիչների տեսահսկումը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին և կանոններին համապատասխան իրականացնելու նպատակով:

**Վարույթ #9. ՄԷԿՏ համակարգում պահպանվող անձնական տվյալները ՌԴ ԱԴԾ սահմանապահ վարչությանը հասանելի դարձնելու վերաբերյալ**

2016թ.-ի դեկտեմբերի 8-ին Գործակալությունը վարույթ է հարուցել՝ ստուգելու համար սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (այսուհետ՝ ՄԷԿՏ) համակարգում պահպանվող անձնական տվյալները ՌԴ ԱԴԾ սահմանապահ վարչությանը հասանելի դարձնելու համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Վարույթ հարուցելու առիթը «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի գրությունն էր՝ ուղղված Գործակալությանը:

Վարույթի շրջանակներում Գործակալությունն ուսումնասիրել է, թե ինչ նպատակով և ծավալով կարող են ՀՀ քաղաքացիների անձնական տվյալները, որոնք ներառված են ՄԷԿՏ

համակարգում, հասանելի դառնալ ՌԴ ԱԴԾ սահմանապահ վարչությանը: Մասնավորապես, Գործակալությունն ուսումնասիրել է 1992թ.-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի ու նրանց կենսագործունեության պայմանների մասին» պայմանագիրը, ինչպես նաև ՀՀ պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին և ՄԷԿՏ համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշումները:

*Գործակալությունը որոշել է, որ ՄԷԿՏ համակարգում պահպանվող անձնական տվյալները ՌԴ ԱԴԾ սահմանապահ վարչությանը հասանելի դարձնելը չի հակասում «անձնական տվյալների մշակման օրինականության սկզբունքին և չի հակասում անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքին, քանի որ իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նպատակով և ծավալով:*

**Վարույթ #10. Զինվորական կոմիսարիատի կողմից քաղաքացու բժշկական տվյալները ՃՈ-ին փոխանցելու վերաբերյալ**

2016թ.-ի դեկտեմբերի 13-ին քաղաքացու դիմումի հիման վրա վարույթ է հարուցվել՝ ՀՀ զինվորական կոմիսարիատի կողմից քաղաքացու անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին ստուգելու համար: Քաղաքացին վիճարկել է այն փաստը, որ ՀՀ զինվորական կոմիսարիատը ՀՀ ճանապարհային ոստիկանությանն է փոխանցել իր մասին բժշկական տվյալներ. Զինվորական կոմիսարիատը ՃՈ-ին հայտնել էր, որ քաղաքացին հոգեկան հիվանդության հիմքով ազատվել է զինվորական ծառայությունից և ներկայացրել էր ախտորոշումը: Վարույթն ընթացքում է:

**Վարույթ #11. Ուկրաինական ավիատղիների կողմից քաղաքացու անձնական տվյալներն այլ անձանց հաղորդելու վերաբերյալ**

2016թ.-ի դեկտեմբերի 13-ին քաղաքացու դիմումի հիման վրա վարույթ է հարուցվել՝ Ուկրաինական ավիատղիների կողմից քաղաքացու անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին ստուգելու համար: Դիմումատուն Գործակալությանը հայտնել էր, որ Ուկրաինական ավիատղիներից ավիատոմս գնելուց հետո իրեն զանգահարել է անհայտ մի կին, ով իմացել է նրանց ուղևորության, թռիչքի օրվա, ուղեբեռի վերաբերյալ տեղեկություններ:

Գործակալությունը հարուցված վարույթով պատրաստվում է պարզել, թե ինչպես են երրորդ անձինք տեղեկացել քաղաքացու և նրա ընտանիքի անձնական տվյալների մասին այն պայմաններում, որ տեղեկությունները քաղաքացին հայտնել է միայն ավիարձնկերությանը: Վարույթն ընթացքում է:

\*\*\*\*

ևս մի գործով Գործակալությունը վերադարձրել է դիմումը, քանի որ քաղաքացին Գործակալությունից խնդրել էր իրավական գնահատական տալ ՀՀ Քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով արգելված արարքի (Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը) առկայության վերաբերյալ: Այնինչ, ՀՀ Քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայության գնահատական տալը դուրս է Գործակալության իրավասություններից:

### Հաջողված գործ

Գործակալությունը երեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ հաղորդում էր ստացել 2016թ.-ի նոյեմբերին՝ Վորլդ Վիժն (World Vision) կազմակերպությունից: Խնդիրն այն էր, որ 2016թ. նոյեմբերի 6-ին armlur.am կայքում հրապարակված «16-ամյա աղջիկը հղիանալուց հետո սուտ մատնություն է տվել, որ իրեն բռնաբարել են» վերտառությամբ հոդվածում ներկայացվել էին անչափահաս աղջկա անձնական տվյալները: Թեև լրատվամիջոցը բարեխղճորեն վերարտադրել էր datalex.am կայքում տեղադրված քրեական գործի տեղեկությունները, սակայն Գործակալության միջամտությամբ հրապարակումից հեռացրեց դատավարության մասնակիցների անունները՝ դրանք փոխարինելով անվան սկզբնատառերով:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Գործակալությունը 2016թ.-ի ընթացքում տրամադրել է իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և մասնակցել իրավական ակտերի նախագծերի մշակմանը: Մա մի կողմից կարևոր է այն առումով, որ այդ իրավական ակտերում հաշվի կառնվեն անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սկզբունքները և չեն ներառվի այնպիսի դրույթներ, որոնք հակասում են անձնական տվյալների պաշտպանության իրավունքին: Մյուս կողմից սա կարևոր է, որովհետև այսպիսով չի լինի հակասություն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի միջև՝ բացառելով օրեսդրությունում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի տարաբնույթ մեկնաբանությունները:

1. Գործակալությունը եզրակացություն ու կարծիք է տվել 46 իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Այդ իրավական ակտերը ներառում են միջազգային պայմանագրեր, օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր՝ մշակված տարբեր գերատեսչությունների կողմից:
2. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքից բխող՝ «Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին մասնակցելիս Գործակալությունն ուսումնասիրել է միջազգային լավագույն փորձը և ՀՀ արդարադատության նախարարության այլ ստորաբաժանումների հետ միասին մշակել համապատասխան նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն:
3. Գործակալության աշխատակիցները, տեղեկատվության ազատության ոլորտում իրենց ունեցած փորձը հաշվի առնելով, մասնակցել են «Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման» հայեցակարգի մշակմանը, իրականացրել տեղեկատվության ազատության ոլորտում (անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքի, անձի՝ հանրային նշանակության տեղեկություն ստանալու իրավունքի, տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտի և SU ոլորտին առնչվող այլ հարցերի վերաբերյալ) միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրություն:
4. Գործակալությունն իր կողմից մշակվող ուղեցույցների, կայացվող որոշումների նախապատրաստման համար իրականացրել է միջազգային (մասնավորապես՝ ԵՄ անդամ երկրների) լավագույն փորձի ուսումնասիրություն երեխաների անձնական տվյալների մշակման առանձնահատկությունների, տեսահսկման իրականացման վերաբերյալ ընդհանրապես և դպրոցներում տեսահսկման իրականացման վերաբերյալ, մասնավորապես՝ անցանկալի հաղորդագրությունների, կենսաչափական անձնական տվյալների, բժշկական բնույթի անձնական տվյալների (առողջական վիճակի մասին), վերաբերյալ, անձնական տվյալների մասին տեղեկություն ստանալու իրավունքի, անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովման և այլ թեմաների վերաբերյալ:
5. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանել է, որ առանց Գործակալության թույլտվության անձնական տվյալները կարող են փոխանցվել այլ պետություն, եթե այդ պետությունում ապահովված է անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակ: Ըստ Օրենքի՝ այդ ցուցակը հրապարակում է Գործակալությունը: Անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակն ապահովող երկրների ցուցակը սահմանող որոշման նախագիծը մշակելիս Գործակալությունն իրականացրել է այլ երկրներում անձնական տվյալների պաշտպանության մակարդակի ուսումնասիրություն և նախապատրաստել

համապատասխան որոշման նախագիծը, որը կհրապարակվի 2017թ.-ի 1-ին եռամսյակում:

6. Գործակալությունն ուսումնասիրել է միջազգային փորձն անցանկալի հաղորդագրությունների խնդրի կարգավորման ոլորտում: Արդյունքում, Գործակալությունը նախաձեռնել է ՀՀ օրենսդրության փոփոխությունների մշակում՝ անցանկալի հաղորդագրությունների խնդիրը լուծելու համար: Նախատեսվում են փոփոխություններ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում: Այս մասին ավելի մանրամասն տես՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ (SOFT LAW) ՁԵՎԱՎՈՐՈՒՄ բաժնում:

**ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ**

Գործակալությունը մեծապես կարևորում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքի և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների մասին հանրության իրազեկումն ու կրթումը: Սա նախ բխում է Գործակալության՝ անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին տեղեկացնելու պարտականությունից: Մյուս կողմից, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ մարդկանց իրազեկվածության մեծ խնդիր կա Հայաստանում. մարդիկ դեռևս ամբողջությամբ չեն գիտակցում իրենց անձնական տվյալները պատշաճ պաշտպանելու կարևորությունը:

Հանրային իրազեկման գործառույթը Գործակալությունն իրականացրել է երեք հիմնական եղանակով՝ հրապարակումներ լրատվամիջոցներով (ներառյալ՝ սոցիալական ցանցերով), քննարկումներ և ուսուցումներ:

***Գործակալության գործունեության մասին հրապարակումներ լրատվամիջոցներով***

Հանրային իրազեկման հարցում Գործակալությունը խիստ կարևորում է զանգվածային լրատվամիջոցների դերը: Լրատվամիջոցները բացառիկ դեր ունեն Գործակալության մտահոգությունները, դիրքորոշումները և անձնական տվյալների պաշտպանության ոլորտի մարտահրավերների մասին տեղեկությունները հանրությանը հասցնելու գործում: ԶԼՄ-ները հանրությանն իրազեկելուց բացի նաև իրենք են հրապարակումների միջոցով ահազանգում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումների մասին, որոնք հիմք են, որ Գործակալությունը քայլեր ձեռնարկի անձնական տվյալների անօրինական մշակումը կանխելու կամ դադարեցնելու ուղղությամբ:



*2016 թվականի ընթացքում Գործակալության նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ լրատվամիջոցներով հրապարակվել է 58 հարցազրույց, վերլուծություն և հոդված:* Տեսահսկումը, անչափահասների անձնական տվյալների պաշտպանությունը, անձնական տվյալների պաշտպանությունը համացանցում և Գործակալության վարչական վարույթները մամուլին ամենաշատ հետաքրքրող թեմաներն են եղել: Լրատվամիջոցները նաև լայնորեն լուսաբանել են Գործակալության մասնակցությամբ իրականացված քննարկումները և կոնֆերանսները:

Գործակալությունը հանրային իրազեկման նպատակով նաև ակտիվորեն օգտագործում է Ֆեյսբուք սոցիալական հարթակը: Գործակալության Ֆեյսբուքյան էջում՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն / Armenian PDPA տեղադրվում են անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ տեղեկություններ, ուղեցույցեր, խորհուրդներ, ներկայացվում է գործակալության գործունեությունը, ինչպես նաև առցանց կապ է ապահովվում քաղաքացիների հետ՝ հաղորդագրությունների միջոցով տրամադրելով խորհրդատվություն:

### Հաջողված գործ

2016թ.-ի մայիսին ԱրմՔոմեդի հաղորդման լրագրողները Գործակալությանը հայտնել էին, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կայքում հրապարակված են ուսանողների անձնական տվյալները՝ անուն, ազգանուն, կոնտակտային տվյալներ անձնագրի համար, սերիա: Գործակալության միջամտության և ՀՊՏՀ-ին տրամադրված խորհրդատվության արդյունքում ՀՊՏՀ-ն սեղմ ժամկետում կայքից հեռացրեց ուսանողների անձնական տվյալները:

### Քննարկումներ

Գործակալության նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ 2016թ.-ին տեղի է ունեցել 14 աշխատանքային քննարկում և կոնֆերանս, որտեղ քննարկվել են անձնական տվյալների պաշտպանության ամենատարբեր հիմնախնդիրները: Պետական մարմինների, լրագրողների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ այս քննարկումներին Գործակալության ներկայացուցիչները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով առկա հիմնախնդիրներն ու գործակալության աշխատանքը: Ստորև ներկայացված են Գործակալության կազմակերպած կամ մասնակցությամբ քննարկումները:



ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը և Եվրոպայի խորհուրդը 2016 թվականի հունվարի 29-ին կազմակերպել էին «Անձնական տվյալների պաշտպանությունը և տեղեկատվության ազատությունը» թեմայով աշխատանքային քննարկում: Քննարկումը նվիրված էր անձնական տվյալների պաշտպանության միջազգային օրվան: Քննարկմանը

մասնակցել են ՀՀ Արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան, ինչպես նաև՝ պետական գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Քննարկման ընթացքում ներկայացվել է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում Գործակալության մի քանի ամիսների աշխատանքը, ինչպես նաև քննարկվել է անձնական տվյալների պաշտպանության ոլորտի զարգացման տեսլականը:



Մայիսի 13-ին Երևանում Գործակալությունը կազմակերպել էր «Անձնական տվյալների պաշտպանությունը և ուղղակի մարքեթինգը» թեմայով աշխատանքային քննարկում՝ The SecDev Foundation-ի աջակցությամբ:

Քննարկմանը մասնակցել են պետական ու մասնավոր կազմակերպությունների, այդ թվում՝ բջջային կապի օպերատորների ներկայացուցիչներ:

Քննարկմանը ներկայացվել են Եվրամիությունում գործող ուղղակի մարքեթինգի օրենսդրական դաշտը և անցանկալի հաղորդագրություններից ու զանգերից սպառողների պաշտպանության մեխանիզմները:

Քննարկմանը մասնակիցներին ներկայացվել է նաև ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության կայացրած «Գովազդային նպատակներով անձնական հեռախոսահամարները օգտագործելու վերաբերյալ» խորհրդատվական որոշումը, որն իր տեսակի մեջ առաջին քայլն էր՝ ուղղված ոլորտի կարգավորմանը:

Բջջային օպերատորների և վաս-օպերատորների մասնակցությամբ 2016թ.-ին ուղղակի մարքեթինգի վերաբերյալ ևս երկու՝ ավելի փոքր քննարկումներ են տեղի ունեցել տարեսկզբին և տերեվերջին:





2016թ.-ի մայիսի 20-ին տեղի է ունեցել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համապատասխանությունը Անձնական տվյալների ավտոմատացված մշակման հետ կապված անհատների պաշտպանության մասին» ԵԽ 108 կոնվենցիային» խորագրով աշխատանքային քննարկում:

Եվրոպայի խորհրդի Արևելյան գործընկերության երկրներում ծրագրային համագործակցության «Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի բարելավումը» ծրագրի ֆինանսական աջակցությամբ կազմակերպված այս քննարկման ընթացքում ԵԽ փորձագետները ներկայացրել են «ԵԽ 108 կոնվենցիային «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համապատասխանության վերաբերյալ» իրենց զեկույցներում առկա դիտարկումները, առաջարկություններն ու եզրակացությունները, որոնց շուրջ ծավալվել է մտքերի փոխանակում:



2016թ.-ի մայիսի 23-ին և 24-ին Անձնական տվյալների պաշտպանության գործակալության մասնակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունում անցկացվել է «Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման» հայեցակարգին վերաբերող աշխատանքային քննարկում Գերմանիայի միջազգային համագործակցության

ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության փորձագետ, պրոֆեսոր Օթթո Լուխթերհադթն աշխատանքային խմբին է ներկայացրել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ 2003թ. հոկտեմբերի 10-ի օրենքի վերաբերյալ իր փորձագիտական եզրակացությունը:

Աշխատանքային խմբի ներկայացուցիչները քննարկել են «Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման» հայեցակարգով սահմանված դրույթները, ներկայացրել եզրակացություններ և առաջարկություններ:

Նմանատիպ մի քննարկում էլ GIZ-ի ներկայացուցիչների և պրոֆեսոր Լյուխթերհադթի հետ անցկացվել է 2016թ.-ի նոյեմբերի 8-ին՝ այս անգամ արդեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ:



2016թ.-ի սեպտեմբերի 6-ին Գործակալության ներկայացուցիչները մասնակցել են Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգի նախագծի քննարկմանը, որը կազմակերպել էր ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ համատեղ: Հանրային քննարկման ընթացքում

Գործակալությունը ներկայացրեց անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը, որի կարգավորումը նախատեսվում է հայեցակարգով, քննարկվեցին տեղեկատվության ազատության ոլորտի մարտահրավերները և դրանք հաղթահարելուն ուղղված հայեցակարգային լուծումները:

2016թ.-ի դեկտեմբերի 6-ին Գործակալության ներկայացուցիչները մասնակցել են Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի և «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության կազմակերպված քննարկմանը: Քննարկմանը մասնակցում էր նաև Վրաստանի Անձնական տվյալների պաշտպանության տեսուչ Թամար Կալթանին:

Գործակալության նախաձեռնությամբ անցկացվել են քննարկումներ datalex.am կայքում հայցվորի և պատասխանողի անձնական տվյալների հրապարակայնության վերաբերյալ (2016թ.-ի մայիս), քննարկում սոցիալական ցանցերի վերաբերյալ, որտեղ ներկայացվել են անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությունը և համացանցում անձնական տվյալների պաշտպանության խնդիրները (2016թ.-ի հոկտեմբեր), ինչպես նաև տեղի է ունեցել հանդիպում ԵԽ կիբեր հանցագործության փորձագետների հետ (2016թ.-ի ապրիլ):


### Ուսուցումներ

Առաջնորդվելով անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին տեղեկացնելու իր իրավասությամբ և հաշվի առնելով նոր ընդունված օրենքի մասին հանրությանը իրազեկելու, կրթելու կարևորությունը՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը 2016թ.-ի ընթացքում տարբեր կազմակերպությունների հրավերով իրականացրել է ուսուցումներ:

Ընդհանուր առմամբ 2016թ.-ի ընթացքում Գործակալությունն իրականացրել է **363** անձանց ուսուցում, որոնցից 51-ը եղել են պետական մարմինների ներկայացուցիչներ, 260-ը՝

տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, 52-ը՝ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

**Աղյուսակ 4. Ուսուցումների մասնակիցները**



- Պետական մարմին 51
- Իրավաբանական անձ 260
- ԶԼՄ ներկայացուցիչ 52

ՀՀ արդարադատության նախարարությունը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համատեղ ապրիլի 5-6-ին և ապրիլի 27-28-ին պետական մարմինների տեղեկատվության ազատության պատասխանատուների համար կազմակերպել էր «Տեղեկատվության ազատությունը՝ որպես պետական մարմինների թափանցիկությունը և պետական ծառայողների բարեվարքությունը խթանելու գործիք» խորագրով վերապատրաստման դասընթացներ:



Անձնական տվյալների պաշտպանության գործակալության ներկայացուցիչները դասընթացին մասնակցել են որպես բանախոսներ՝ մասնակիցներին ներկայացնելով և նրանց հետ քննարկելով տեղեկատվության ազատության իրավական հենքը, տեղեկատվության տրամադրման օբյեկտներն ու սուբյեկտները, այն ստանալու, տրամադրելու եղանակները, մերժման ու բողոքարկման հիմքերը: Դասընթացների ժամանակ ներկայացվել են նաև տեղեկատվության ազատության ոլորտի նոր ենթաօրենսդրական ակտի դրույթները, համաձայն որոնց՝ ոլորտում կարգավորվել են տեղեկատվության ազատության պատասխանատուների աշխատանքը, էլեկտրոնային տարբերակով հարցում ներկայացնելու, հարցումների վիճակագրությունը վարելու ընթացակարգերը:



ՀՀ արդարադատության նախարարությունը՝ Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ) աջակցությամբ, 2016թ.-ի մայիսի 6-7-ին Դիլիջանում անցկացրել է լրագրողների իրավական վերապատրաստման դասընթաց: Գործակալությունն այս վերապատրաստման

ընթացքում 20 զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ քննարկել է անձնական տվյալների պաշտպանության իրավական հիմքերը և այդ տվյալների հրապարակմանն առնչվող լրագրողական էթիկայի դրույթները:

Գործակալությունն ուսուցումներ է իրականացրել նաև «Գործք» ՄՊԸ-ի և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության հրավերով, ինչպես նաև «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հրավերով իրականացրել է իրազեկման հանդիպում զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների 20 ներկայացուցիչների համար:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ՓԱՓՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ (SOFT LAW) ԶԵՎԱՎՈՐՈՒՄ**

2016թ.-ի ընթացքում Գործակալության համար նախանշվել են այն հիմնախնդիրները, որոնք առնչվում և անհանգստացնում են հասարակության լայն շերտերին: Այդպիսի խնդիրները լուծելու, դրանց լուծման ճանապարհների մասին մարդկանց իրազեկելու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումները կանխելու նպատակով Գործակալությունը 2016թ.-ին մշակել է ուղեցույցներ և կայացրել խորհրդատվական որոշումներ (փափուկ իրավունքի ձևավորում):

Խորհրդատվական որոշումները թեև կոնկրետ դեպքում պարտադիր բնույթ չունեն, սակայն հիմնվում են օրենքով ու միջազգային նորմերով սահմանված սկզբունքների վրա: Հետևաբար, խորհրդատվական որոշմանը չհետևելն ինքնըստինքյան կհանգեցնի անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության խախտմանը:

Փափուկ իրավունքի միջոցով Գործակալությունն իր դիրքորոշումները և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի մեկնաբանությունները հասցնում է անձանց լայն շրջանակի, միևնույն ժամանակ, փափուկ իրավունքը հնարավորություն է տալիս կանխել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումները՝ հետագայում վարչական վարույթներով իրավունքին արդեն հասցված վնասը վերականգնելու փոխարեն: Փափուկ իրավունքը նաև հնարավորություն է տալիս արձագանքել արագ զարգացող իրականության պատճառով անձնական տվյալների պաշտպանության ոլորտում առաջացող նոր մարատահրավերներին:

## ՏԵՍԱՀՄԿՈՒՄ (video surveillance)

2016թ.-ի փետրվարին Գործակալությունը *մշակել և հրապարակել է համապարփակ ուղեցույց տեսահսկման մասին*: Ուղեցույցի նպատակն է ներկայացնել տեսահսկման հիմնական կանոններն ու սկզբունքները՝ ապահովելով մարդկանց անձնական տվյալների պաշտպանությունը: Ուղեցույցը մշակվել է՝ առաջնորդվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներով և տեսահսկման կարգավորման միջազգային չափանիշներով:

Ուղեցույցը կազմված է 5 բաժնից: 1-ին բաժինը ներկայացնում է, թե ինչ է տեսահսկման համակարգը և որ տեսագրություններն են համարվում անձնական տվյալ պարունակող:

Ուղեցույցի 2-րդ բաժինը ներկայացնում է տեսահսկման համակարգի տեղադրման և օգտագործման սկզբունքները: Այս բաժնում Գործակալությունն անդրադարձել է օրինականության, համաչափության, թափանցիկության և անվտանգության սկզբունքներին, ինչպես նաև թափանցիկության սկզբունքի շրջանակներում ներառված բարեխղճության և տեղեկատվության մատչելիության սկզբունքներին:

Ուղեցույցի 3-րդ բաժնում ներկայացված են տեսահսկման նպատակները: Այսպես, Գործակալությունը, հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրության վրա, որպես հասարակական վայրերում տեսահսկման իրավաչափ նպատակ ուղեցույցում նշել է ազգային անվտանգությունը, հասարակական անվտանգությունը, երկրի տնտեսական բարեկեցությունը, հանցագործությունների և անկարգությունների կանխումը, առողջության կամ բարոյականության պաշտպանությունը, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, տրանսպորտային երթևեկության կարգավորումը: Իսկ որպես պետական և մասնավոր հաստատությունների շենքերում տեսահսկման իրականացման իրավաչափ նպատակ Գործակալությունն առանձնացրել է անձանց և սեփականության անվտանգությունը ապահովելը, գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելը և անչափահասներին վնասակար ազդեցությունից պաշտպանելը:

Ուղեցույցի 4-րդ բաժինը նվիրված է տեսահսկման չափանիշներին: Այս բաժնում Գործակալությունը ներկայացրել է, թե ինչպես պետք է կազմակերպել տեսահսկումը՝ անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքը չխախտելու համար:

Ուղեցույցի 5-րդ բաժնով Գործակալությունը ներկայացրել է, թե ինչ պատասխանատվություն է սահմանված անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտելու համար:

Ուղեցույցը հասանելի է ՀՀ արդարադատության նախարարության կայքում՝ [http://moj.am/storage/uploads/002Video\\_surveillance\\_guide.pdf](http://moj.am/storage/uploads/002Video_surveillance_guide.pdf) հղմամբ:

## ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***Հրապարակված խորհրդատվական որոշում էրեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ***

2016թ.-ի մարտի 21-ին Գործակալությունը հրապարակեց Երեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ խորհրդատվական որոշում՝ հաշվի առնելով «Save the Children» միջազգային հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից Գործակալությունը հասցեագրված գրությունը:

Առիթն այն էր, որ 2016թ.-ի փետրվարի 28-ին [www.shamshyan.com](http://www.shamshyan.com) կայքում «Արտակարգ դեպք Երևանում. փրկարարների ճիշտ գործողությունների արդյունքում երեխաների ինամբի և պաշտպանության համար գիշերօթիկ հաստատությունում կանխվեց երեխաների ինքնասպանությունը. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ» վերտառությամբ նյութում ներկայացվել էին գիշերօթիկ հաստատության սաների անուն, ազգանունները, տարիքը, հաստատության անվանումը, ինչպես նաև լուսանկարներ, որոնցում երևում են երեխաները: [www.shamshyan.com](http://www.shamshyan.com) կայքից նյութն արտատպել էին նաև այլ առցանց լրատվամիջոցներ:

Գործակալությունը, վերլուծելով միջազգային փորձը, միջազգային և ներպետական իրավական ակտերի կարգավորումները, արձանագրեց, որ երեխաների իրավունքներն, այդ թվում անձնական տվյալների պաշտպանության իրավունքն առաջնահերթ ուշադրության են արժանի, ինչպես նաև գտավ, որ յուրաքանչյուր ոք, առավել ևս՝ պետական մարմինները և կազմակերպությունները, ինչպես նաև լրատվամիջոցները, երեխայի անձնական կյանքի պաշտպանությանը պետք է առաջնային ուշադրություն դարձնի և բավարար միջոցներ ձեռնարկի երեխաների անձնական տվյալների անօրինական մշակումը բացառելու համար: Խորհրդատվական որոշումը կայացնելիս Գործակալությունը նաև հաշվի առավ երեխայի լավագույն շահի սկզբունքը, ըստ որի՝ անձը, ով դեռևս չի հասել ֆիզիկական և հոգեբանական հասունության, ավելի շատ պաշտպանության կարիք ունի, քան մյուսները:

Գործակալությունն իր խորհրդատվական որոշմամբ սահմանեց, որ երեխայի անձնական տվյալներ մշակողները, այդ թվում՝ պետական մարմինները և լրատվամիջոցները, կրում են հետևյալ նվազագույն պարտականությունները և պարտավոր են.

- իրենց գործունեությունը կազմակերպել անձնական տվյալների պաշտպանության և երեխայի լավագույն շահն ամրագրող նորմերին համապատասխան, անձնական տվյալները հրապարակայնացնել միայն օրինական նպատակով՝ նպատակին հասնելու համար պիտանի, անհրաժեշտ և չափավոր ծավալով,



- երեխաների անձնական տվյալներ հրապարակելիս ցուցաբերել հատուկ զգուշավորություն երեխաներին չվնասելու համար՝ օգտագործելով անձնական տվյալներն ապանձնավորելու միջոցներ (փոխել երեխայի անունը, օգտագործել միայն անվան առաջին տառերը, փակել լուսանկարում երեխայի դեմքը և այլն),
- երեխաների անձնական տվյալները հրապարակել միայն այն բացառիկ դեպքերում, երբ հրապարակումը խիստ կարևոր է երեխայի լավագույն շահը պաշտպանելու համար և ապանձնավորված կերպով հնարավոր չէ հասնել այդ նպատակին,
- հաշվի առնելով, որ [www.shamshyan.com](http://www.shamshyan.com) կայքից նյութը արտատպել էին այլ լրատվամիջոցներ՝ Գործակալությունը նշեց, որ ակնկալում է, որ բոլոր այն լրատվամիջոցները, որոնք հրապարակել են երեխաների անձնական տվյալները (այդ թվում՝ լուսանկարներ), անհապաղ կապանձնավորեն (անհինարհնության դեպքում՝ կհեռացնեն) դրանք՝ ընթերցողներին բացատրելով նման քայլի պատճառները:

Խորհրդատվական որոշումը հասանելի է ՀՀ արդարադատության նախարարության կայքում՝ <http://moj.am/storage/uploads/Save-the-Children-FINAL-1.pdf> հղմամբ:

### *Ուղեցույց Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին*

Խորհրդատվական որոշման հրապարակումից հետո, հաշվի առնելով երեխաների անձնական տվյալների պաշտպանության կարևորությունը և առանձնահատկությունները, Գործակալությունը սկսեց մշակել համապարփակ ուղեցույց Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին:

Ուղեցույցի նպատակն է ապահովել երեխաների անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակ, բարձրացնել տվյալներ մշակողների և երեխաների տեղեկացվածությունը իրենց իրավունքների և պարտականությունների մասին և բացառել անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության սխալ և հակասական մեկնաբանումը: Նախատեսվում է, որ ուղեցույցը կունենա ներածություն և 5 բաժին, որոնցում ներկայացված կլինեն երեխաների անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները, անձնական տվյալների պաշտպանության ոլորտում երեխաների հիմնական իրավունքները և տվյալներ մշակողների պարտականությունները, ուսումնական հաստատություններում երեխաների անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները, համացանցում երեխաների անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները, զանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները:

Ուղեցույցի 1-ին գլխում ներկայացվում են երեխայի անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները: Այս բաժնում բացի անձնական տվյալների մշակմանը

բնորոշ օրինականության, համաչափության, թափանցիկության և անվտանգության սկզբունքներից, ներկայացվելու է նաև երեխայի լավագույն շահի սկզբունքը, որի էությունն է ապահովել երեխայի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական առողջ զարգացումը, այլ կերպ ասած՝ նպաստել երեխայի անհատականության բնականոն զարգացմանը:

Հաշվի առնելով, որ երեխան իր կենցաղի մի մասն անցկացնում է ուսումնական հաստատություններում (դպրոցում), ինչպես նաև դպրոցի կարևոր դերը երեխայի անհատականության ձևավորման և դաստիարակության հարցում՝ Գործակալությունն Ուղեցույցի 2-րդ գլուխը նվիրել է ուսումնական հաստատություններում երեխաների անձնական տվյալների մշակմանը՝ առանձին բաժնով ներկայացնելով նաև ուսումնական հաստատություններում երեխաների տեսահսկման առանձնահատկությունները:

Ուղեցույցի 3-րդ գլխում Գործակալությունն անդրադարձել է մի հարթակի, որտեղ անձնական տվյալների պաշտպանությունը մեծ ռիսկերի է դիմակայում և առանձնահատուկ պաշտպանության կարիք ունի: Խոսքը համացանցի մասին է: Այս գլխում Գործակալությունը ներկայացրել է երեխաների իրավունքները և կայքերի պատասխանատուների պարտականությունները, ինչպես նաև անդրադարձել է նոր զարգացող այնպիսի իրավունքի, ինչպիսին մոռացված լինելու իրավունքն է:

Ուղեցույցի 4-րդ գլուխը նվիրված է Զանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների հրապարակման առանձնահատկություններին: Այստեղ Գործակալությունը ներկայացրել է երեխայի լավագույն շահի գաղափարը՝ նշելով, որ զանգվածային լրատվության միջոցները երեխաների անձնական տվյալներն առանց երեխայի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ կարող են հրապարակել միայն այն դեպքում, երբ նման տեղեկության հրապարակումը պայմանավորված է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ կամ այն բացառիկ դեպքում, երբ հրապարակումը խիստ կարևոր է երեխայի լավագույն շահը պաշտպանելու համար և ապանձնավորված կերպով հնարավոր չէ հասնել այդ նպատակին:

Ուղեցույցի 5-րդ գլխում նվիրված են անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները և երեխաների անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցները:

Ուղեցույցի վերջնական նախագիծն արդեն պատրաստ է և կհրապարակվի 2017թ.-ի 1-ին եռամսյակում:

## ԱՆՑԱՆԿԱԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2016թ.-ի մարտի 22-ին Գործակալությունը հրապարակեց Գովազդային նպատակով անձնական հեռախոսահամարները օգտագործելու վերաբերյալ խորհրդատվական որոշում:

Առիթը xopan.am-ից ՀՀ քաղաքացիների բջջային հեռախոսահամարներին ուղարկված հաղորդագրություններն էին (SMS), որտեղ գործատուներին ու աշխատանք փնտրողներին առաջարկվում էր օգտվել կայքի ծառայություններից: Այս դեպքն առիթ էր, որ Գործակալությունն ուսումնասիրի անցանկալի ուղղակի մարքեթինգի կարգավորման միջազգային փորձը և հրապարակի խորհրդատվական որոշում:

Գործակալությունը, վերլուծելով միջազգային փորձը, հաստատեց, որ անցանկալի (չպահանջված) գովազդային հաղորդագրություններ փոխանցելը միջամտություն է մարդու անձնական կյանքին, և որ դրանք կարող են անհանգստություն պատճառել մարդկանց՝ այդ թվում առաջացնելով ծախսեր ստացողների համար: Գործակալությունն իր խորհրդատվական որոշմամբ նաև նշեց, որ ցանկացած դեպքում մարդու անձնական տվյալները, այդ թվում՝ անձնական հեռախոսահամարը, պետք է օգտագործվեն բացառապես անձի համաձայնությամբ կամ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքում: Միջազգային փորձի հիման վրա Գործակալությունն ուղղակի մարքեթինգ իրականացնելու համար համաձայնության երկու մեխանիզմ էր առանձնացրել՝ նախնական (opt-in) և հետագա (opt-out): Opt-in մեխանիզմի դեպքում տվյալների սուբյեկտը նախապես և հստակ կերպով տալիս է իր համաձայնությունը անձնական տվյալների մշակման համար, իսկ opt-out մեխանիզմի դեպքում՝ տվյալների սուբյեկտը հրաժարվում է իր տվյալների հետագա մշակումից: Այս համատեքստում Գործակալությունն իր որոշմամբ արձանագրել էր, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի արգելել իր անձնական տվյալները, այդ թվում՝ հեռախոսահամարը, օգտագործել ուղղակի մարքեթինգի նպատակով, ինչպես նաև ցանկացած պահի պահանջել դադարեցնել իր անձնական տվյալների, այդ թվում՝ հեռախոսահամարի օգտագործումն ուղղակի մարքեթինգի նպատակով:

Գործակալությունն իր խորհրդատվական որոշմամբ սահմանեց, որ ուղղակի մարքեթինգ իրականացնողները կրում են հետևյալ նվազագույն պարտականությունները և պարտավոր են.

- իրենց գործունեությունը կազմակերպել անձնական տվյալների պաշտպանության և ուղղակի մարքեթինգը կարգավորող նորմերին և սկզբունքներին համապատասխան, անձնական տվյալներն, այդ թվում՝ անձնական հեռախոսահամարն օգտագործել միայն անձի համաձայնությամբ, նախապես սահմանված նպատակով՝ նպատակին հասնելու համար պիտանի, անհրաժեշտ և չափավոր ծավալով,
- տվյալների սուբյեկտին տրամադրել անձնական տվյալների, այդ թվում՝ անձնական հեռախոսահամարի հավաքագրման աղբյուրի, նպատակների և իրավական հիմքերի, օգտագործման պայմանների, ինչպես նաև իր (և իր անունից ուղղակի մարքեթինգ իրականացնող կազմակերպության) մասին տեղեկատվություն,

- ներդնել կազմակերպչական և/կամ տեխնիկական (ծրագրային) միջոցներ, որոնք թույլ կտան պաշտպանել անձնական տվյալները պատահական կամ ապօրինի ոչնչացումից, փոփոխելուց, ապօրինի ձեռք բերումից, կամ այլ ապօրինի օգտագործումից,
- բաժանորդներին հնարավորություն տալ նախնական (opt-in մեխանիզմով) կամ ցանկացած այլ պահի (opt-out մեխանիզմով) հրաժարվել իրենց անձնական տվյալների օգտագործումից ուղղակի մարքեթինգի նպատակով: Դադարեցնել ուղղակի մարքեթինգային նպատակներով հեռախոսահամարի մշակումը, եթե բացակայում է անձի համաձայնությունը (մարքեթինգային ցուցակներից ջնջել, հեռացնել սուբյեկտի մասին տեղեկատվությունը և դադարացնել հաղորդագրություններ ուղարկելը),
- հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցող կազմակերպությունների դերն ուղղակի մարքեթինգի կարգավորման հարցում՝ Գործակալությունը նշեց, որ ակնկալում է, որ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցող բոլոր կազմակերպությունները (կամ օպերատորները) կձեռնարկեն անհրաժեշտ և առավելագույն կազմակերպչական, տեխնիկական (ծրագրային) միջոցներ՝ կանխելու համար առանց իրենց բաժանորդների համաձայնության այլ անձանց կողմից ուղղակի մարքեթինգի նպատակով բաժանորդների անձնական տվյալների օգտագործումը,
- Գործակալությունը նաև նշեց, որ ակնկալում է, որ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցող կազմակերպությունները (կամ օպերատորները) էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու վերաբերյալ բաժանորդների հետ կնքվող պայմանագրերում կնախատեսեն ուղղակի մարքեթինգի նպատակով բաժանորդի անձնական տվյալներն, այդ թվում հեռախոսահամարն օգտագործելու վերաբերյալ դրույթներ:

Խորհրդատվական որոշումը հասանելի է ՀՀ արդարադատության նախարարության կայքում՝ [http://moj.am/storage/uploads/Khorhrdatvakan-voroshum-2\\_1.pdf](http://moj.am/storage/uploads/Khorhrdatvakan-voroshum-2_1.pdf) հղմամբ:

### ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ

Սոցիալական ցանցերն այսօր մարդկանց առօրյայի մի մասն են դարձել և մարդու կամքով կամ նրա կամքից անկախ, հաճախ նաև չիմացությամբ, դրանց միջոցով հավաքվում, պահպանվում, օգտագործվում և տարածվում են անձնական տվյալներ: Ամբողջ աշխարհում և Հայաստանում մարդու մասին տեղեկություններ հայթայթելու լավագույն հասանելի աղբյուրները սոցիալական ցանցերն են, որտեղ օգտատերերը որոշակի կամ անորոշ շրջանակի մարդկանց հասանելի են դարձնում իրենց անձնական տվյալները՝ հաճախ նաև առանց հաշվի առնելու դրա հնարավոր հետևանքները: Սոցիալական ցանցերում մարդիկ առավել քան խոցելի են, քանի որ անձնական տվյալների արտահոսքն այստեղ կարող է տեղի ունենալ ցանկացած պահի՝ ցանցահեռանքների կամ ցանցի ղեկավարության կողմից: Ինչպես նաև անձնական տվյալները կարող են օգտագործվել

գովազդային կամ այլ նպատակներով: Նկատի ունենանք, որ տարբեր ցանցերում այսօր գործնականում գրանցվում են նաև անչափահասներ, երեխաներ, և այս դեպքում կարող են ի հայտ գալ երեխաների անձնական տվյալների պաշտպանության հարցեր:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը հրապարակում է ոչ միայն ուղեցույցեր և խորհրդատվական որոշումներ իրավունքի մեկնաբանություններով, այլ նաև այնպիսի ուղեցույցեր, որոնք կոչված են գործնականում օգնել անձանց տնօրինելու իրենց անձնական տվյալները և պաշտպանելու դրանք տարբեր հարթակներում:

2016թ.-ի դեկտեմբերին Գործակալությունը հրապարակել է ուղեցույց՝ **Ինչպես դիմել Facebook-ին անձնական կամ այլ տվյալները հեռացնելու համար**: Ուղեցույցը ներառում է գործնական խորհուրդներ և քայլերի հաջորդականություն, թե անհրաժեշտության դեպքում ինչպես կարելի է պաշտպանվել անձնական տվյալների անցանկալի կամ ոչ իրավաչափ մշակումից «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Ուղեցույցը հասանելի է ՀՀ արդարադատության նախարարության կայքում՝ <http://moj.am/storage/uploads/Facebook.pdf> հղմամբ:

### ***Նախատեսվող ուղեցույց***

2016թ.-ի ընթացքում Գործակալությունը մշակել է ևս մեկ ուղեցույց՝ որի նպատակն է ներկայացնել, թե ինչպես պետք է անձնական տվյալներն ավելի պաշտպանված դարձնել Գուգլում (Google), ինչ գործիքներով և ինչպես կարելի է պաշտպանել անձնական տվյալները ՅուԹյուբում (YouTube): Ուղեցույցի վերջնական նախագիծն արդեն պատրաստ է և կհրապարակվի 2017թ.-ի 1-ին եռամսյակում:

## **Հաջողված գործ**

2016թ.-ի նոյեմբերի 30-ին Yandex ընկերությունը գործարկեց Երևանի առցանց քարտեզը: Տեղեկատվության անվտանգության մասնագետ Մամվել Մարտիրոսյանը և Ֆեյսբուքի մի քանի այլ օգտատերեր իրենց մտահոգությունը հայտնեցին այն մասին, որ գործարկված առցանց քարտեզի լուսանկարներում պատկերված են մարդկանց դեմքերը և ավտոմեքենաների պետհամարանիշերը, ինչը կարող է խախտել մարդկանց անձնական կյանքի գաղտնիությունը: ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը, ուսումնասիրելով բարձրացրած հարցը, ինչպես նաև նկատի ունենալով քարտեզների հետ կապված տարբեր կազմակերպությունների որդեգրած քաղաքականությունն ու այդ ոլորտում եղած լավագույն միջազգային փորձը, դիմեց Yandex-ին՝ հայտնելով, որ մարդկանց դեմքերը, ինչպես նաև ավտոմեքենաների պետհամարանիշերը լուսանկարներում չփակելը խնդրահարույց է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համատեքստում: Երկու օրվա ընթացքում Yandex ընկերությունն ամբողջովին վերափոխեց առցանց քարտեզը՝ փակելով կամ

ապանձնավորելով Երևան քաղաքի պանորամային լուսանկարներում պատկերված մարդկանց դեմքերն ու մեքենաների պետահամարանիշերը:

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մշակողը մինչև կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը, պարտավոր է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ծանուցել տվյալներ մշակելու մտադրության մասին»: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ծանուցումը պետք է ներառի անձնական տվյալներ մշակողի, անձնական տվյալների մշակման իրավական հիմքերի և նպատակների, մշակվող անձնական տվյալների շրջանակի, տվյալների սուբյեկտների շրջանակի, անձնական տվյալների մշակման ժամկետների և տվյալների հետ կատարվող գործողությունների, ինչպես նաև անձնական տվյալները մշակելու անվտանգության ապահովման վերաբերյալ տեղեկություններ: Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ պարտադիր ծանուցում պետք է ուղարկեն բոլորը, ովքեր մինչև Օրենքի ընդունումն արդեն մշակել են կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ:

Ծանուցումներն ամենամեծ հետաքրքրությունն են ներկայացնում անձնական տվյալներ մշակողների համար. Գործակալությանը խորհրդատվության խնդրանքով դիմողների մեծամասնությունը (66%) դիմել է հենց կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մշակման և համապատասխան ծանուցման կազմման և տրամադրման ձևերի մասին հարցերով:

2016թ.-ի ընթացքում Գործակալությունը ստացել է **1544 ծանուցում**: Այս ծանուցումներից 697-ը ներկայացրել են պետական հիմնարկներ (նախարարություններ, ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ և այլն) իսկ 847-ը՝ մասնավոր անձինք են (ֆիզիկական և իրավաբանական):

Ամենաշատ ծանուցումներն ստացվել են ՍՊԸ-ներից՝ 475 ծանուցում: Ներկայացված ծանուցումների քանակով հաջորդը դպրոցներն են՝ 330 ծանուցում, այնուհետև՝ անհատ ձեռնարկատերերը՝ 164 ծանուցում:

## Հաջողված գործ

2016թ.-ի դեկտեմբերին մի քաղաքացի դիմել էր Գործակալությանը՝ հայտնելով, որ «Յունիբանկում» հաշվեհամար բացելու համար իրենից պոլիկլինիկայի կողմից տրամադրվող տեղեկանք են պահանջել: Քաղաքացին խնդրել էր խորհրդատվություն՝ արդյոք իրավաչափ է այդպիսի տվյալներ

պահանջել հաշվեհամար բացելու համար: Գործակալության միջամտությամբ և տրամադրած խորհրդատվության արդյունքում «Յունիբանկը» հենց տվյալ պահին լուծել է քաղաքացու խնդիրը՝ մատուցել է ծառայություն առանց լրացուցիչ անձնական տվյալներ պահանջելու:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

2016թ.-ը Գործակալության համար արդյունավետ է եղել անձնական տվյալների պաշտպանության միջազգային կառույցների հետ համագործակցության ձևավորման առումով: 2016թ.-ին Գործակալությունն անդամակցել է անձնական տվյալների պաշտպանության բոլոր եվրոպական կառույցներին ու խմբերին.

- անդամակցել է Global Privacy Enforcement Network-ին, (GPEN),
- անդամակցել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Անձնական տվյալների պաշտպանության մարմինների ցանցին (CEEDPA),
- հավատարմագրվել է եվրոպական անձնական տվյալների պաշտպանության մարմինների կոնֆերանսին՝ եվրոպական ազգային մարմին կարգավիճակով
- անդամակցել է Berlin Privacy Group-ի՝ Հեռահաղորդակցության մեջ անձնական տվյալների պաշտպանության միջազգային աշխատանքային խմբին,
- Անդամակցում է Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեին (T-PD):

2016թ.-ի մայիսի 27-ին Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը ճանաչվել է անձնական տվյալների պաշտպանության եվրոպական ազգային մարմին՝ համաձայն Անձնական տվյալների պաշտպանության եվրոպական մարմինների համաժողովում ընդունված բանաձևի: Այս մասին որոշումը կայացվել է ԵՄ անդամ պետությունների անձնական տվյալների պաշտպանության մարմինների ամենամյա հանդիպման ժամանակ: Անձնական տվյալների պաշտպանության ոլորտի զարգացումներին և տարբեր երկրների փորձի ներկայացմանը նվիրված այս համաժողովը ԵՄ և եվրոպական այլ երկրների անձնական տվյալների լիազոր մարմինների հանդիպումն է, որը, սովորաբար, ամփոփվում է ոլորտի վերաբերյալ կարևոր փաստաթղթերի ընդունմամբ:

2016թվականին Գործակալության աշխատակիցները նաև ուսումնասիրել են այլ երկրների փորձը Էստոնիայում և Վրաստանում:

- 2016թ.-ի մայիսի 30-ից հունիսի 3-ը Գործակալության աշխատակիցները մասնակցել են Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում տեղի ունեցած «Տալլինի էլեկտրոնային կառավարում կոնֆերանս»-ին, որից հետո աշխատանքային այց են կատարել

Էստոնիայի արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության տեսչություն՝ նրանց փորձն ուսումնասիրելու համար:

- 2016թ.-ի դեկտեմբերի 14-ից դեկտեմբերի 16-ը Գործակալության աշխատակիցները մասնակցել են Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում անցկացված «Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը Արևելյան գործընկերության երկրներում» կոնֆերանսին, որը կազմակերպել էր Եվրոպայի խորհուրդը: Կոնֆերանսի ընթացքում Գործակալության պետ Շուշան Դոյոյանը ներկայացրել է Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության համակարգը, իսկ Գործակալության վարչական վարույթների իրականացման բաժնի պետ Գևորգ Հայրապետյանը ներկայացրել է Գործակալության կարիքները և գերակայությունները: Թբիլիսիում Գործակալության աշխատակիցները նաև հանդիպումներ են ունեցել Վրաստանի անձնական տվյալների պաշտպանության ինսպեկտորի գրասենյակում, ուսումնասիրել նրանց փորձը:

**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է անձնական տվյալների պաշտպանության իր լիազորությունը՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: Գործակալության լիազորությունները սահմանված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ըստ որի.

- Գործակալությունն ապահովում է անձնական տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը,
- քննում է անձնական տվյալների մշակմանը վերաբերող հարցերով ֆիզիկական անձանց դիմումները և իր լիազորությունների սահմաններում ընդունում որոշումներ,
- ստուգում է անձնական տվյալների մշակման համապատասխանությունը սույն օրենքի պահանջներին,
- ստուգում է տվյալներ մշակելու համար օգտագործվող սարքերը և փաստաթղթերը, այդ թվում՝ առկա տվյալները և համակարգչային ծրագրերը և այլն:
- Իր լիազորությունների շրջանակում Գործակալությունը կարող է պահանջել արգելափակել, կասեցնել կամ դադարեցնել օրենքի պահանջները խախտող անձնական տվյալների մշակումը,
- պահանջել անձնական տվյալների ուղղում, փոփոխում, ուղեփակում կամ ոչնչացում, ամբողջությամբ կամ մասամբ արգելել անձնական տվյալների մշակումը,




- օրենքի պահանջների խախտման դեպքում կիրառում է օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

Գործակալության լրագրություններից են նաև նձնական տվյալներ մշակողների ռեեստր վարելը, հետազոտություններ կատարելը, անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն տալը կամ անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին տեղեկացնելը:

**Գործակալության նպատակները և խնդիրներն են՝**

- անձնական տվյալների մշակողների ռեեստրի վարման աշխատանքների ապահովումը.
- անձնական տվյալների պաշտպանության հետ կապված հարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը.
- իր իրավասության սահմաններում անձնական տվյալների մշակման օրինականության ապահովումը:

**Գործակալության կառուցվածքը**



**ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8

Հեռ.՝ +37410 5940 62/63

Էլ. փոստ՝ sh.doydoyan@moj.am

Երևան, 2017